ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՇԽԵՆ ՄԱՆՎԵԼԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային,սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СОГОМОНЯН АШХЕН МАНВЕЛОВНА

ВОПРОСЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЛИКВИДАЦИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ В РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Դավիթ Մարատի Սերոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Մերուժանի Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու
Սիմոն Տիգրանի Ֆարմանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. նոյեմբերի 23-ին, ժամը 14^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թ. հոկտեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավ գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юрид. наук доцент,
Давид Маратович Серобян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Армен Меружанович Айкянц
кандидат юрид. наук
Симон Тигранович Фарманян

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 23-ого ноября 2021 г. в 14:30 часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11-ого октября 2021 года.

Ученный секретарь специализированного совета: кандидат юридических наук, доцент **Т.О. Суджян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում շուկայական տնտեսության հաստատումը, ինչպես նաև համաշխարհային տնտեսական հարաբերությունների զարգացումն իրենց զգալի ազդեցությունն են գործել նաև հասարակական հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման վրա: Շուկայական հարաբերությունների ամենաակտիվ դերակատարներն են իրավաբանական անձինք, որոնց ստեղծումը և դադարումը հանդիսանում է շարունակական բնական գործընթաց, որը տեսական գրականության մեջ ստացել է «իրավաբանական անձի կյանքի ցիկլ» պատկերավոր բնորոշումը: Ի տարբերություն ֆիզիկական անձանց, որոնց լույս աշխարհ գալը և հեռանալը բնական երևույթ է, իրավաբանական անձի ստեղծումը և դադարումը ընթանում են օրենքով նախատեսված հստակ ընթացակարգերով, որոնց ուսումնասիրությունն ունի կարևոր գործնական և տեսական նշանակություն:

Օրենսդրության զարգացման ներկայիս միտումները և մասնագիտական գրականության մեջ առկա ուսումնասիրությունները վկայում են, որ պրակտիկայով պայմանավորված՝ նախապատվություն է տրվել սնանկության հիմքով իրավաբանական անձանց, հատկապես տնտեսական ընկերությունների լուծարման հարցերին, իսկ այլ հիմքերով լուծարման հիմնահարցերը մնացել են անտեսված, քիչ ուսումնասիրված և թերի կարգավորված: Տնտեսական ընկերությունները հիմնականում լուծարվում են կամավոր հիմունքներով դրանց կառավարման մարմինների որոշման հիման վրա, իսկ հարկադիր լուծարումը՝ դատարանի որոշման հիման վրա, որը թեպետ այդքան տարածված չէ, սակայն դրա իրականացումը քաղաքացիական շրջանառության կայունության վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն, խաթարել շուկայական հարաբերությունները և խախտել մեծ թվով սուբյեկտների իրավունքներ ու օրինական շահեր: Հատկապես հարկադիր լուծարման հարցում մեր օրենսդրությունն ունի լուրջ խնդիրներ. այն, կարելի է ասել, հետ է մնացել համաշխարհային զարգացման արդի միտումներից և մնացել խորհրդային իրավունքի ազդեցության տակ՝ այդ ինստիտուտի կիրառությունը գործնականում դարձնելով անհնարին և վտանգավոր:

Թեմայի արդիականությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցում այդ գործընթացի հստակեցումը և հիմքերի համապատասխանեցումը եվրոպական արդի չափորոշիչներին վճռական նշանակություն ունի, քանի որ ներդրում կատարելիս օտարերկրյա ներդրողներն առաջին հերթին ուսումնասիրում են իրենց հետագա գործունեության հնարավոր ռիսկերը, իսկ թվարկված հանգամանքներն այդ հարցում ունեն կարևոր դերակատարություն: Նույն նկատառումներով նշված խնդիրը խիստ արդիական է նաև ներքին ներդրողների համար:

Քաղաքացիական շրջանառության բնականոն զարգացման հարցում շատ կարևոր են գործարարական գործունեության սուբյեկտների կայուն պայմանագրային հարաբերությունները: Ուստի դրանք, որպես լուծարվող ընկերության պարտատերեր կամ պարտապաններ, պետք է ունենան օրենսդրական երաշխիքներ, որ իրենց գործընկերոջ լուծարման դեպքում չեն խախտվի իրենց իրավունքներն ու օրինական շահերը:

Թեմայի արդիականությունը թերևս վերը նշվածով չի սպառվում. ՀՀ քաղաքացիական օրենսդրության շրջանակներում լուրջ բացթողումներ կան նաև լուծարման ընթացակարգի, լուծարային հանձնաժողովի որպես լուծարումն իրականացնող իրավաբանական անձի մարմին միջանկյալ դերի և նշանակության հստակեցման, լիազորությունների շրջանակի, կազմավորման կարգի, փոփոխելիության և պատասխանատվության խնդիրների հետ կապված, որոնք նույնպես լուրջ վտանգ կարող են ստեղծել և՛ լուծարվող ընկերության, և՛ դրա պարտատերերի համար: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դրա միջոցով ևս փորձ չի արվել պատասխանել գործնական մի շարք խնդիրների, թերևս դրա հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ Հայաստանի Հանրապետությունում գործարարական գործունեության սուբյեկտների գերակշռող մեծամասնությունը դեռևս շատ հեռու է գրագետ և համակարգված գործունեություն ծավալելու մտքից, իսկ հնարավորության դեպքում փորձում են նաև լուծարման ընթացքում խուսափել իրենց պարտավորությունները կատարելուց:

Վերոնշյալ տեսական և պրակտիկ հետևությունները պայմանավորում են ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ընկերությունների լուծարման իրավահարաբերությունների համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկների մշակումը:

Այդ նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել լուծարման իրավահարաբերությունների ձևավորման և զարգացման պատմությունը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում, ինչպես նաև նախքան Հայաստանի խորհրդայնացումը՝ ռուսական իրավունքի շրջանակներում, որը մեծ ազդեցություն է ունեցել հայ իրավական մտքի վրա,
- վերլուծել իրավաբանական անձի դադարման հասկացությունը, ձևերը, ներկայացնել փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանից հանելը որպես դադարման ձև նախատեսելու գործնական անհրաժեշտությունը,

- ուսումնասիրել իրավաբանական անձի լուծարման որպես դրա դադարման ձևի հասկացությունը, հատկանիշները, տարբերությունները այլ ձևերից ու դրա առանձնահատկությունները,
- ներկայացնել և վերլուծել տնտեսական ընկերությունների լուծարման հիմքերը, դրանց հասկացությունը, բացահայտել դրանց՝ մասնագիտական գրականության մեջ առաջարկված դասակարգման տարբերակները, ներկայացնել նոր մոտեցումներ դրանց դասակարգման վերաբերյալ,
- ուսումնասիրել տնտեսական ընկերությունների կամավոր լուծարման հասկացությունը, հիմքերը, իրականացման կարգը,
- ուսումնասիրել տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման հասկացությունը, հիմքերը, բացահայտել դրանց թերությունները, առաջարկել նոր մոտեցումներ,
- բացահայտել իրավաբանական անձի լուծարման մասին որոշման հասկացությունը, իրավական բնույթը, էական պայմանները, անվավերությունը և անվավերության հետևանքները,
- ներկայացնել լուծարման հանձնաժողովի՝ որպես իրավաբանական անձի կառավարման հատուկ մարմնի առանձնահատկությունները, ձևավորման կարգը, պատասխանատվության խնդիրները,
- ուսումնասիրել լուծարման գործընթացը կազմող փուլերի ընթացքում իրականացվող գործողությունները, բացահայտել դրանց վերաբերյալ առկա օրենսդրական բացերը, առաջարկել դրանց լուծման հնարավոր տարբերակներ,
- բացահայտել լուծարման ընթացքում պարտատերերի իրավունքների խախտման հնարավոր տարբերակները և առաջարկել դրանց բացառման միջոցներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են հանդիսանում իրավաբանական անձանց լուծարման իրավահարաբերությունները տնտեսական ընկերությունների օրինակով, բացառությամբ սնանկության իրավահարաբերությունների, իսկ առարկան՝ տնտեսական ընկերությունների լուծարման ինստիտուտը՝ առկա հիմնախնդիրներով:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:

Հայրենական իրավագիտության մեջ լուծարման ինստիտուտը և դրա շուրջ առկա տեսական և գործնական խնդիրները, բացառությամբ սնանկության՝ որպես իրավաբանական անձանց հարկադիր լուծարման հիմք, համապարփակ վերլուծության չեն ենթարկվել: Խնդրո թեմային որոշակի անդրադարձ կատարվել է պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյանի, պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանի աշխատություններում, սակայն դրանք ըստ էության տնտեսական ընկերությունների լուծարման ինստիտուտի համապարփակ հետազոտություն չեն հանդիսանում:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ իրավաբանական անձանց, այդ թվում՝ տնտեսական ընկերությունների լուծարման ինստիտուտը համակողմանի վերլուծել են տարբեր գիտնականներ, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել Ա. Վ. Գաբովին, Վ. Վ. Դոլինսկայային, Ռ. Տ. Միֆտախուտդինովին, Հ. Հ. Մարտինին (Martin H. Heidenhain):

Բացի վերոնշյալ հեղինակների աշխատություններից՝ հետազոտության տեսական հիմք են կազմել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատություններ, այդ թվում՝ Ս. Ն. Բրատուսի, Օ. Ա. Կրասավչիկովի, Ի. Ս. Շիտկինայի, Ե. Ա. Սուխանովի, Ա. Յու. Սլոնևսկայայի, Հ. Ա. Սարգսյանի, Ա. Ստեփանովի, Գ. Շապկինայի և բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Ատենախոսության նորմատիվային հենքը կազմել է կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Աշխատանքի իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ վճռաբեկ և ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ինչպես նաև օտարերկրյա մի քանի պետությունների դատարանների դատական ակտեր, մի շարք կորպորացիաների կանոնադրություններ և ներքին կանոնակարգող փաստաթղթեր:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, սինթեզի, անալիզի և այլ մեթոդներ, ինչպես նաև մասնագիտական հատուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական մեթոդները, որոնց օգնությամբ վերլուծվել են Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների՝ տնտեսական ընկերությունների լուծարման իրավահարաբերությունների կարգավորմանը վերաբերող օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, բացահայտվել են այդ բնագավառում առկա տեսական և գործնական հիմնահարցերը, առաջարկվել են դրանց լուծման գործնական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին խոր և համապարփակ աշխատանքն է, որի շրջանակներում ուսումնասիրվել են տնտեսական ընկերությունների, այդ թվում՝ գործունեության առանձին ոլորտներում ներգրավված ընկերությունների լուծարման ընթացքում առաջացող իրավահարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, վեր են հանվել այդ գործընթացի ժամանակ առաջացող մի շարք տեսական և գործնական խնդիրներ, ուսումնասիրվել են դրանց լուծման հնարավոր տարբերակներ՝ հաշվի առնե-

լով նաև միջազգային փորձը, տրվել է իրավաբանական անձանց լուծարման հասկացությունը, այն ներկայացվել որպես իրավաբանական անձի դադարման ձև, բացի այդ հիմնավորվել է փաստացի դադարած իրավաբանական անձանց իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանից հանելը որպես իրավաբանական անձանց դադարման ինքնուրույն ձև նախատեսելու անհրաժեշտությունը, ատենախոսության շրջանակներում առաջարկվել են արմատական փոփոխություններ լուծարման տեսակների և դրա հիմքերի վերաբերյալ, առաջարկվել է տարբերակված մոտեցում ցուցաբերել կամավոր և հարկադիր լուծարման գործընթացների կարգավորման որոշ հարցերում, վեր է հանվել լուծարման հանձնաժողովը՝ որպես իրավաբանական անձի կառավարման հատուկ մարմին նախատեսելու անհրաժեշտությունը, առաջարկվել է դրա ձևավորման, անդամների փոփոխման և պատասխանատվության ներդրման տարբերակներ, հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ հիմնավորվել է իրավաբանական անձի լուծարման մասին որոշումը որպես ներքին կորպորատիվ իրավական ակտ նախատեսելու անհրաժեշտությունը, ներկայացվել են այդ որոշման էական պայմանները, դրա անվավերության հիմքերն ու հետևանքները: Ատենախոսության տրամաբանությունը կառուցված է այնպես, որ իրավաբանական անձի լուծարման ողջ գործընթացի ժամանակ հաշվի առնվեն նաև պարտատերերի, ինչպես նաև փոքրամասնություն կազմող մասնակիցների իրավունքներն ու շահերը:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ, հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ իրավաբանական անձի դադարումը ներկայացվում է սոսկ որպես իրավաբանական անձի լուծարման կամ վերակազմակերպման հետևանք, տրված չէ իրավաբանական անձի դադարման հասկացության բանաձևումը, ինչպես նաև դադարման ձևեր հանդիսացող իրավաբանական անձի լուծարումը և վերակազմակերպումը հստակ տարանջատված չեն, իսկ փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելը որպես դադարման ինքնուրույն ձև նախատեսված չէ, և վերլուծելով խնդրին վերաբերող միջազգային փորձը, ինչպես նաև աշխատանքում ներկայացված տեսական հիմնավորումները, առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բանաձևել իրավաբանական անձի դադարման հասկացությունը, իսկ իրավաբանական անձի լուծարումը, միացման,

միաձուլման և բաժանման ձևով վերակազմակերպումը, ինչպես նաև փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելը դիտարկել որպես իրավաբանական անձի դադարման ինքնուրույն ձևեր:

2. Իրավաբանական անձանց հարկադիր լուծարումը միջճյուղային իրավական ինստիտուտ է, այն միաժամանակ կարող է կարգավորվել և՛ քաղաքացիական, և՛ քրեական, և՛ վարչական իրավունքի նորմերով: Քաղաքացիական իրավահարաբերություններում իրավաբանական անձի հարկադիր լուծարումը՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության և այլ անձանց իրավունքների պաշտպանության միջոց, քաղաքացիաիրավական սանկցիա է, որը կիրառվում է դատարանի կողմից օրենքով լիազորված անձանց պահանջով:

Առաջարկվել է քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսել հարկադիր լուծարման միայն այն հիմքերը, որոնք կրում են բացառապես քաղաքացիական իրավունքի նորմերով նախատեսված պարտավորությունների խախտման համար կիրառվող սանկցիայի բնույթ: Սակայն անկախ այն հանգամանքից, թե իրավունքի որ ճյուղով է նախատեսված հարկադիր լուծարման կոնկրետ հիմքը, լուծարման իրականացման ընթացակարգը պետք է կարգավորվի միայն քաղաքացիական օրենսդրությամբ, եթե այլ առանձնահատկություններ չեն նախատեսվի պատասխանատվության տվյալ տեսակի կիրառման համար հիմք հանդիսացող օրենսդրությամբ:

Կատարված վերլուծությամբ առաջարկվել է նաև հարկադիր լուծարման բոլոր հիմքերը՝ անկախ իրավունքի այս կամ այն ճյուղին պատկանելիությունից, բաժանել երկու խմբի՝ վերապահումով և անվերապահ: Նման դասակարգումն ունի էական նշանակություն, քանի որ հիմնավորվել է, որ իրավաբանական անձանց հարկադիր լուծարման ոչ բոլոր հիմքերն են, որ պետք է անպայմանորեն հանգեցնեն իրավաբանական անձի լուծարման, քանի որ դա չի բխում նաև հասարակության և պետության շահերից, ինչպես նաև մեծ վտանգ է սպառնում քաղաքացիական շրջանառության կայունության և կամայական միջամտության անթույլատրելիության ապահովման տեսանկյունից: Ըստ այդմ, առաջարկվել է իրավաբանական անձանց հարկադիր լուծարման անվերապահ հիմքեր համարել նրանք, որոնք կնախատեսվեն վարչական կամ քրեական օրենսդրությամբ, իսկ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսվածները համարել վերապահումով հիմքեր, և նախքան դրանք կիրառելը դատարանը պետք է տրամադրի օրենքով նախատեսված ժամկետ՝ դրանցով պայմանավորված թերությունները շտկելու համար:

3. ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ իրավաբանական անձանց կամավոր լուծարման հասկացության և հիմքերի վերաբերյալ նորմերը

անորոշ են, իսկ դրանց մեկնաբանությունը տարակարծությունների տեղիք է տալիս: Մասնավորապես պարզ չէ, թե ժամկետի լրանալը կամ նպատակին հասնելը պետք է արդյոք դիտարկել որպես իրավաբանական անձի լուծարման անվերապահ հիմք, թե ոչ, կամ արդյո՞ք իրավաբանական անձի կամավոր լուծարման վերաբերյալ որոշումը պետք է պատճառաբանված լինի, թե ցանկացած դեպքում կարող է ընդունվել նման որոշում: Գործնականում կարող են առաջանալ այնպիսի դեպքեր, երբ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված են գործունեության որոշակի նպատակներ, կամ նախատեսվել է գործունեության կոնկրետ ժամկետ, արդյունքում նպատակն իրագործվել է, կամ պարզվել է, որ այն անիրագործելի է, կամ ժամկետն է լրացել, և այդ հանգամանքները մնացել են անհետևանք: Որպես այս խնդրի լուծման հնարավոր տարբերակ առաջարկվել է հստակեցնել իրավաբանական անձի կամավոր լուծարման որոշման հասկացությունը, նման որոշման անվերապահությունը, ժամկետի լրանալուն կամ նպատակին հասնելուն որպես կամավոր լուծարման հիմքերին տալ պատշաճ ձևակերպում: Միաժամանակ, կատարված վերլուծությամբ հեղինակը եզրահանգել է, որ թեև իրավաբանական անձի կամավոր լուծարման մասին որոշումը պատճառաբանման կարիք չունի, սակայն նման որոշում կարող է կայացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ իրավաբանական անձն ի վիճակի է բավարարել իր պարտատերերի պահանջները և կարող է իր պարտապաններից պահանջել պարտավորությունների վաղաժամկետ կատարում: Նշված հետևությունների արդյունքում ներկայացվել է իրավաբանական անձի կամավոր լուծարման հետևյալ հասկացությունը, որը միաժամանակ բովանդակում է նաև դրա պարտադիր հատկանիշները. իրավաբանական անձանց կամավոր լուծարումը բնորոշվում է որպես իրավաբանական անձի լուծարման տեսակ, որի դեպքում լուծարման մասին որոշումը կայացվում է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ լիազորված մարմնի կողմից՝ առանց երրորդ անձանց միջամտության, եթե լուծարվող իրավաբանական անձն ի վիճակի է բավարարել իր պարտատերերի պահանջները, ինչպես նաև պարտապաններից կարող է պահանջել պարտավորության վաղաժամկետ կատարում:

4. Տնտեսական ընկերությունների լուծարման մասին ընդհանուր ժողովի կայացրած որոշումը հանդիսանում է կամավոր լուծարման գործընթացն ամրագրող սկզբնական իրավաբանական փաստ: Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ այդ որոշման իրավական բնույթն անորոշ է: Վերջինիս բացահայտումը կարևոր է դրա վիճարկման և անվավերության հետևանքների կիրառման տեսանկյունից, քանի որ դատական պրակտիկայում նման գործերի

քննության ժամանակ տարբեր դատարաններ տարբեր մոտեցումներ են դրսևորում, և արդյունքում լուրջ խնդիրներ են առաջանում իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից: Կատարված տեսական ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվել է տնտեսական ընկերության կամավոր լուծարման մասին որոշումը դիտարկել որպես ներքին կորպորատիվ իրավական ակտ, իսկ որպես նման որոշման վավերության էական պայմաններ են սահմանվել լուծարման մասին, լուծարային հանձնաժողով (լուծարող) ստեղծելու, լուծարման կարգն ու ժամկետները սահմանելու մասին հարցերի, ինչպես նաև լուծարման մասին որոշումը իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին տեղեկացնելու պարտականություն ունեցող սուբյեկտի սահմանման վերաբերյալ պայմանները, որոնցից թեկուզ մեկի բացակայությունը լուծարման մասին որոշման անվավերության հիմք է:

5. Լուծարման հանձնաժողովի կարգավիճակի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսդրության նորմերը տարակարծությունների տեղիք են տալիս: Մասնավորապես այդ նորմերի վերլուծությունց պարզ չեն լուծարման հանձնաժողովի իրավական կարգավիճակը և լիազորությունների սահմանները: Արդյունքում իրավաբանական անձի լուծարման ժամանակ կարող է տեղի ունենալ իրավաբանական անձի կառավարման մարմինների միևնույն լիազորությունների իրականացում մի քանի մարմնի կողմից, բացի այդ լուծարման հանձնաժողովը իրավաբանական անձի կառավարման մարմին չհամարելը առաջացնում է տեսական և գործնական խնդիրներ, քանի որ, իրականացնելով լուծարվող իրավաբանական անձի կառավարմանն ուղղված բոլոր հիմնական լիազորությունները, այն ունի ստորադաս նշանակություն կառավարման մարմինների համակարգում: Մեր կարծիքով լուծարման հանձնաժողովը իրավաբանական անձի հատուկ մարմին է, քանի որ այն ունի իրավաբանական անձի կառավարման մարմնի հասկացությամբ դրան վերագրվող բոլոր հատկանիշները (իրավաբանական անձի կառուցվածքային մաս է, ներկայացված է մեկ կամ մի քանի ֆիզիկական անձանց կողմից, ձևավորվում է օրենքով սահմանված կարգով, իրականացնում է իրավաբանական անձի կառավարմանն ուղղված լիազորություններ, ընդունում է իրավական ակտեր, որոնցով արտահայտում է իրավաբանական անձի կամքը), բայց քանի որ այն ստեղծվում է միայն իրավաբանական անձի լուծարման դեպքում, ուստի այն պետք է ընդունել որպես հատուկ մարմին, միաժամանակ հիմնավորվել է նաև, որ դրա ստեղծմամբ գործադիր մարմնի և տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) լիազորությունները պետք է դադարեցվեն: Ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև լուծարման հանձնաժողովի կազմի, անդամների պատասխանատվության և լիազորությունների

դադարեցման, փոփոխելիության վերաբերյալ առկա հիմնախնդիրներին ու ներկայացվել դրանց լուծման հնարավոր տարբերակներ:

6. Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսական ընկերությունների լուծարման ընթացակարգի շրջանակներում իրականացվող գործողությունների մանրակրկիտ ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական կարևորություն, քանի այդ գործողությունների ճշգրիտ իրականացումից է կախված ինչպես այդ տնտեսական ընկերության մասնակիցների, այնպես էլ դրա պարտատերերի իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումը: Այս տեսանկյունից տնտեսական ընկերությունների լուծարման ընթացքում իրականացվող գործողությունները վերլուծվել են հետևյալ երեք փուլերի շրջանակներում՝

ա) իրավաբանական անձի լուծարման մասին որոշման ընդունումը, իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած մարմնի պարտականությունների կատարումը մինչև լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը,

բ) լուծարման միջանկյալ հաշվեկշռի կազմումը և պարտատերերի պահանջների բավարարումը,

գ) լուծարման հաշվեկշռի կազմումը և իրավաբանական անձի դադարումը:

Վերլուծության շրջանակներում հիմնավորվել է, որ իրավաբանական անձի լուծարման գործընթացի շրջանակներում իրականացվող գործողությունները որոշակի խմբերում միավորելն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ դրա միջոցով կարելի է լուծարման տարբեր փուլերում առանձին որոշումների և գործողությունների բողոքարկման պահը պայմանավորել կոնկրետ փուլի ավարտով և առավել արդյունավետորեն իրականացնել լուծարման հանձնաժողովի առջև դրված խնդիրները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ սույն աշխատանքում տնտեսական ընկերությունների լուծարման ոլորտն ուսումնասիրվել է համալիր կերպով, վեր են հանվել ոլորտում առկա մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնցով պայմանավորված՝ սույն ատենախոսության եզրահանգումները, ներկայացված գիտական և գործնական առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ սույն ոլորտի հետագա զարգացման, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ սույն հետազոտությունը կարող է կիրառվել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ընթացքում՝ մասնավորապես հիմք հանդիսանալով ինչպես օրենսդրական փոփոխությունների, այնպես էլ պրակտիկ խնդիրների

լուծման համար: Բացի այդ, սույն ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնական դասընթացների, մասնավորապես «Քաղաքացիական իրավունք» և «Կորպորատիվ իրավունք» դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված ութ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ «Իրավաբանական անձի լուծարման էությունը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

«Իրավաբանական անձի լուծարման ինստիտուտի զարգացման պատմությունը Հայաստանում» վերտառությամբ 1.1. պարագրաֆում ուսումնասիրվել է Հայաստանում տարբեր ժամանակներում իրավաբանական անձանց գոյության դադարման իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրական ակտերում ամրագրված նորմերի բովանդակությունը՝ փորձելով նաև բացահայտել այդ ինստիտուտի զարգացման տրամաբանությունը և նպաստող գործոնները:

«Լուծարումը որպես իրավաբանական անձի դադարման ձև» վերտառությամբ 1.2. պարագրաֆում ուսումնասիրվել է տնտեսական ընկերությունների դադարման և լուծարման հարաբերակցության հարցը, բացահայտվել է վերջիններիս էությունը, հիմնավորվել է ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված, սակայն միջազգային պրակտիկայում լայնորեն հայտնի՝ փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելը որպես իրավաբանական անձի դադարման նոր ձև սահմանելու անհրաժեշտությունը:

Երկրորդ գլուխը՝ «Տնտեսական ընկերությունների լուծարման

հիմքերը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

«Տնտեսական ընկերության լուծարման հիմքերը և դրանց դասակարգումը» վերտառությամբ 2.1. պարագրաֆում անդրադարձ է կատարվել տնտեսական ընկերությունների լուծարման գործընթացը սկսելու համար հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի ուսումնասիրությանը և դրանց դասակարգմանը, որի արդյունքում առանձնացվել են լուծարման կամավոր և հարկադիր հիմքերը:

«Տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման հիմքերը» վերտառությամբ 2.2. պարագրաֆում ուսումնասիրվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման հիմքերը, ներկայացվել են տվյալ ինստիտուտի վերաբերյալ այլ երկրների օրենսդրությամբ նախատեսված մոտեցումները, առաջարկվել է ՀՀ օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

«Տնտեսական ընկերությունների կամավոր լուծարման հիմքերը» վերտառությամբ 2.3. պարագրաֆում անդրադարձ է կատարվել «կամավոր լուծարում» եզրույթին, ներկայացվել է դրա հասկացությունը և ձևակերպվել են տնտեսական ընկերության ընդհանուր ժողովի կողմից նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ պայմանները:

Երրորդ գլուխը՝ **«Տնտեսական ընկերությունների լուծարման գործընթացը և լուծարմանն առնչվող սուբյեկտների իրավունքները»** վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

«Տնտեսական ընկերության լուծարման մասին որոշման իրավական բնույթը» վերտառությամբ 3.1. պարագրաֆում հետազոտվել են տնտեսական ընկերության լուծարման մասին որոշման իրավական բնույթը, դրա վավերության պայմանները, անվավերության հետևանքներն ու այդ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը:

«Տնտեսական ընկերության լուծարման հանձնաժողովի իրավական բնույթը» վերտառությամբ 3.2. պարագրաֆում անդրադարձ է կատարվել լուծարման հանձնաժողովի լիազորություններին, այդ մարմնի իրավական բնույթին, դրա անդամների պատասխանատվության, վարձատրության, փոփոխման, դրա կազմի համալրման հետ կապված հարցերին:

«Տնտեսական ընկերությունների լուծարման կարգը» վերտառությամբ 3.3. պարագրաֆում խմբավորվել են լուծարման ընթացքում տեղի ունեցող գործողությունները, վերջիններս քննարկվել են առանձին-առանձին, անդրադարձ է կատարվել լուծարվող ընկերության իրավասուբյեկտության ծավալի սահմանափակումներին, ուսումնասիրվել է լուծարման միջանկյալ և եզրափակիչ հաշվեկշիռների կազմման կարգն ու բովանդակությունը, ինչպես նաև լուծարման հանձնաժողովի կողմից ընկերության պարտատերերի

պահանջների բավարարման հերթականությունը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. Առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը լրացնել 62.1. հոդվածով, որը կվերաբերվի իրավաբանական անձի դադարմանը, կտա դրա հասկացությունը և ձևերը: Ըստ այդմ՝ առաջարկվում է 62.1. հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 62.1. Իրավաբանական անձի դադարումը

1. Իրավաբանական անձի դադարումն օրենքով նախատեսված իրավաբանական փաստակազմ է, որը հանգեցնում է այդ իրավաբանական անձի մասնակցությամբ առաջացած իրավահարաբերությունների դադարմանը՝ իրավունքներն ու պարտականություններն համընդհանուր իրավահաջորդության կարգով այլ անձի փոխանցելով (նոր իրավաբանական անձ ստեղծելով) կամ առանց դրա (առանց նոր իրավաբանական անձ ստեղծելու):

2. Իրավաբանական անձը դադարում է լուծարմամբ, միացման, միաձուլման, բաժանման ձևով վերակազմակերպմամբ կամ փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելով»:

2. Հաշվի առնելով իրավաբանական անձի լուծարման դեպքում իրավահաջորդության բացակայության կամ առկայության վերաբերյալ տարբեր գիտական մոտեցումները և կատարված վերլուծությունը՝ առաջարկվում է իրավաբանական անձի լուծարման հասկացության հետևյալ տարբերակը, ըստ որի անհրաժեշտ է համապատասխան փոփոխության ենթարկել նաև Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին կետը և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Իրավաբանական անձի լուծարումն իրավաբանական անձի գոյության դադարման ձև է, որն իրականացվում է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի իրավասու մարմնի (կամավոր լուծարում) կամ դատարանի կամ այլ իրավասու պետական մարմնի որոշման հիման վրա (հարկադիր լուծարում) առանց իրավունքներն ու պարտականությունները համընդհանուր իրավահաջորդության կարգով այլ անձի փոխանցելու»:

3. Ուսումնասիրելով փաստացի դադարած իրավաբանական անձանց իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելու ոլորտում Հայաստանի Հանրապետության նախկին փորձը, ինչպես նաև միջազգային փորձը՝ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով այն ենթարկել առանձին կարգավորման և ներդնել հետևյալ բովանդակությամբ 71.1. հոդված.

«Հոդված 71.1. Փաստացի դադարած իրավաբանական անձին իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելը

1. Իրավաբանական անձը, որը վերջին 12 ամսվա ընթացքում հարկային մարմիններին չի ներկայացրել ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային հաշվետվությունները, չունի գույք և չի կատարել գործարքներ թեկուզ մեկ բանկային հաշվով, համարվում է փաստացի դադարած (չգործող իրավաբանական անձ):

2. Փաստացի դադարած իրավաբանական անձն իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելն իրավաբանական անձի դադարման ինքնուրույն ձև է և չի հանգեցնում լուծարման ընթացակարգ սկսելուն»:

4.Դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված իրավաբանական անձանց հարկադիր լուծարման հիմքի վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ այն սոսկ վարչական իրավունքի նորմերի իրավախախտման արդյունքում կիրառվող սանկցիա է և պետք է նախատեսվի վարչական օրենսդրությամբ, բացի այդ առաջարկվում է այդպիսիք համարել միայն օրենքի կոպիտ խախտումները, այլ ոչ թե ցանկացած նորմի խախտում, որոնք վերացնելու դեպքում չեն խախտվի այլ անձանց՝ սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքները:

5. Դատարանի վճռով տնտեսական ընկերության՝ առանց թույլտվության կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելը որպես հարկադիր լուծարման հիմք քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսելը արդարացված չէ: Նմանատիպ արարքների համար արդեն իսկ նախատեսված է քրեական և վարչական պատասխանատվություն համապատասխան օրենսդրության նորմերով: Ուստի առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չնախատեսել իրավաբանական անձի հարկադիր լուծարման նման հիմք և իրավաբանական անձն այս հիմքի առկայության պայմաններում պատասխանատվության ենթարկել վարչական կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված սանկցիաների շրջանակներում:

6. Քանի որ ժամկետի լրանալը կամ նպատակին հասնելը չեն կարող դիտվել որպես իրավաբանական անձի լուծարման անվերապահ հիմքեր, հակառակ դեպքում դրանք կդիտարկվեն ոչ թե որպես կամավոր, այլ հարկադիր լուծարման հիմքեր, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի վերտառությունը և բովանդակությունը ենթարկել փոփոխության և վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 67. Իրավաբանական անձի կամավոր լուծարումը

1. Իրավաբանական անձը կարող է կամավոր լուծարվել նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ, եթե իրավաբանական անձը ի վիճակի է բավարարել իր պարտատերերի պահանջները, ինչպես նաև կարող է պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջել իր պար-

տապաններից:

2. Եթե իրավաբանական անձը հիմնադրվել է որոշակի նպատակով կամ որոշակի ժամկետով, ապա նպատակին հասնելու, դրա անիրագործելիության կամ ժամկետի լրանալու դեպքում իրավաբանական անձի կանոնադրության մեջ այդ հանգամանքների ի հայտ գալուց հետո վեցամսյա ժամկետում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ: Այդ պահանջը չկատարելու դեպքում իրավաբանական անձը ենթակա է լուծարման հարկադիր կարգով»:

7. Առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և հարակից օրենքներում ընդհանուր ժողովի լիազորությունների շարքում ավելացնել նաև կամավոր լուծարումը դադարեցնելու ընդհանուր ժողովի իրավունքը, սակայն անհրաժեշտ է, որ նման որոշումը ընդունվի ընկերության մասնակիցների միաձայնությամբ, քանի որ լուծարման գործընթաց սկսելու արդյունքում ընկերության ակտիվները պակասում են շեշտակիորեն և ստանձնել նման ընկերությունը ճգնաժամից հանելու համարձակություն ոչ բոլոր մասնակիցները կունենան: Ինչ վերաբերում է պարտատերերին, որոնք արդեն ներկայացրել են իրենց պահանջները լուծարային հանձնաժողովին և ստացել են բավարարում, նման որոշումը որևէ կերպ չի կարող անդրադառնալ նրանց իրավունքների վրա, իսկ այն պարտատերերը, որոնց պահանջները դեռ չեն բավարարվել, կարող են հետ վերցնել իրենց պահանջները կամ կրկնակի պահանջ ներկայացնել: Պարտատերերին ծանուցելու պարտականությունը պետք է դրվի լուծարային հանձնաժողովի վրա, որը պետք է իր լիազորությունները շարունակի մինչև նման պարտատերերի պահանջների լրիվ բավարարումը: Միևնույն ժամանակ որպես նման որոշում ընդունելու վերջնաժամկետ պետք է ընդունել մինչև պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը մասնակիցների միջև բաշխելը, քանի որ դրանից հետո լուծարումը դադարեցնելը իմաստազրկվում է:

8. ՀՀ քաղաքացիական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ լուծարման հանձնաժողովի կազմի վերաբերյալ հատուկ նորմեր չկան, որի արդյունքում դրա կազմում կարող են ընդգրկվել նաև լուծարվող իրավաբանական անձի կառավարման հետ կապ չունեցող սուբյեկտներ: Բացի այդ չկան հստակ ցուցումներ լուծարման հանձնաժողովի կազմի փոփոխման, այլ անդամների նշանակման, նրանց լիազորությունների դադարեցման վերաբերյալ: Արդյունքում, օրինակ, լուծարային հանձնաժողովի անդամի մահվան դեպքում նրա փոխարեն այլ անդամի նշանակման հարցը կարող է մնալ անլուծելի: Ուստի առաջարկվում է օրենքով նախատեսել, որ լուծարային հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել գործադիր մարմնի կամ տնօրենների խորհրդի անդամները, իհարկե հնարավորություն տալով ընդհանուր ժողովին ևս այս հարցում ունենալ կարևոր դերակատարություն և ցանկության դեպքում լուծարման հանձնաժողովի կազմում ընդգրկել այլ անդամներ ևս,

իսկ ինչ վերաբերում է հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման հարցին, ապա առաջարկվում է օրենքով նախատեսել, որ ընդհանուր ժողովը կարող է ցանկացած պահի դադարեցնել լուծարային հանձնաժողովի անդամի լիազորությունները՝ նրա փոխարեն նշանակելով այլ անձի: Բացի այդ առաջարկվում է նախատեսել դատական կարգով ևս լուծարային հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման հնարավորություն, իսկ նման պահանջով դատարան դիմելու իրավունք վերապահել ոչ միայն իրավաբանական անձի մասնակիցներին, այլև այլ շահագրգիռ անձանց, օրինակ՝ պարտատերերին:

Լուծարային հանձնաժողովի անդամների արդյունավետ գործունեության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է նախատեսել նաև նրանց աշխատանքի հատուցելիության սկզբունքը՝ ամրագրելով վարձատրության վերաբերյալ հատուկ նորմեր:

9. Ներկայումս ո՛չ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ո՛չ էլ հարակից օրենքները չեն նախատեսում լուծարման ընթացակարգի իրականացման ո՛չ նվազագույն, ո՛չ էլ առավելագույն ժամկետներ: Սակայն լինելով բավականին բարդ գործընթաց՝ լուծարումը շատ հաճախ գործնականում իրականացվում է բավականին շատ խախտումներով և բացթողումներով, և օրենսդրության ոչ բոլոր պահանջներն են բարեխղճորեն կատարվում լուծարման գործընթացում ներգրավված անձանց կողմից: Առաջարկվում է ներդնել խնդրի լուծման երկու տարբերակ. առաջին՝ կարելի է առանձին ժամկետներ նախատեսել լուծարման գործընթացում ներառված առանձին փուլերի համար, օրինակ՝ միջանկյալ ժամկետներ նախատեսել պարտատերերի պահանջների բավարարման, լուծարվող ընկերության դեբիտորական պարտքի հավաքման և այլ գործողությունների իրականացման համար, երկրորդ՝ սահմանել ընդհանուր ժամկետ լուծարման ողջ գործընթացի համար: Լուծարման ողջ գործընթացի համար կարելի է նախատեսել 12 ամսյա ժամկետը, քանի որ դա այն օպտիմալ ժամկետն է, որի ընթացքում, հաշվի առնելով օրենքով նախատեսված պարտադիր գործողությունների իրականացման անհրաժեշտությունը, կարելի է արդյունավետորեն կազմակերպել այդ գործընթացը: Ուստի մենք առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ՝ «Իրավաբանական անձի լուծարման կարգը» հոդվածը փոփոխել և լրացնել 1.1 կետով, ներկայիս 1 կետում շարադրված նորմը տեղափոխել 1.1 կետ, իսկ 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Իրավաբանական անձի լուծարումը պետք է իրականացվի 12-ամսյա ժամկետում: Այդ ժամկետը կարող է երկարացվել միայն դատարանի որոշմամբ՝ մինչև 6 ամիս ժամկետով»:

10. Իրավաբանական անձը լուծարվելիս, բացառությամբ սնանկության հիմքով լուծարման դեպքի, ի վիճակի է բավարարել իր պարտատերերի պահանջները, ուստի այդ պահանջների բավարարման արհեստական հերթեր սահմանելը կրում է ձևական բնույթ: Պարտատերերի պահանջները պետք է

բավարարվեն ըստ ներկայացման հերթականության: Սակայն որպեսզի հետագայում չառաջանա սնանկության հիմքով ընկերությունը հարկադիր լուծարելու վտանգ, կարելի է կիրառել ընկերության պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու Մեծ Բրիտանիայի փորձը, որի դեպքում նախքան ընկերությունը կամավոր լուծարելու հարցը ընդհանուր ժողովի օրակարգում ներառելը պարտադիր կլինի պարտատերերի պահանջների բավարարման հայտարարագիր կազմելը, որով ընկերությունը պետք է հիմնավորի, որ ի վիճակի է բավարարել իր բոլոր հայտնի պարտատերերի պահանջները, որից հետո միայն ընդհանուր ժողովի օրակարգում կարող է մտցվել ընկերության կամավոր լուծարման հարցը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սողոմոնյան Ա., «Հայաստանի Հանրապետությունում լուծարվող տնտեսական ընկերության պարտատերերի իրավունքների պաշտպանության որոշ հիմնահարցեր», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 210-222 էջեր:
2. Սողոմոնյան Ա., «Տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման հիմքերը Հայաստանի Հանրապետությունում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2016, 158-170 էջեր:
3. Սողոմոնյան Ա., «Տնտեսական ընկերության լուծարման հանձնաժողովի իրավական բնույթը», Պետություն և իրավունք, N 2 (80), 2018, ԵՊՀ հրատ., Երևան, 23-30 էջեր:
4. Սողոմոնյան Ա., «Տնտեսական ընկերության լուծարման հիմքերը և դրանց դասակարգումը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2), 2018, ԵՊՀ հրատ, Երևան, 2019, 192-210 էջեր:
5. Սողոմոնյան Ա., «Լուծարումը որպես իրավաբանական անձի դադարման ձև», Օրիանականույթուն № 20 2020, Տիր հրատ., Երևան, 2020, 54-62 էջեր:
6. Սողոմոնյան Ա., «Տնտեսական ընկերության լուծարման մասին որոշման իրավական բնույթը», Դատական իշխանություն 7-8 (253-254), 2020, 45-57 էջեր:
7. Սողոմոնյան Ա., «Տնտեսական ընկերությունների կամավոր լուծարման հասկացությունը և հիմքերը», Պետություն և իրավունք Թիվ 2 (87), ԵՊՀ հրատ., Երևան, 2020, 41-48 էջեր:
8. Սողոմոնյան Ա., «Տնտեսական ընկերությունների լուծարման կարգը», Պետություն և իրավունք Թիվ 3(88), ԵՊՀ հրատ., Երևան, 2020, 47-61 էջեր:

АШХЕН МАНВЕЛОВНА СОГОМОНЯН

ВОПРОСЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЛИКВИДАЦИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Установление рыночной экономики в Республике Армения, а также развитие мирохозяйственных связей оказали значительное влияние на гражданско-правовое урегулирование общественных отношений. Наиболее активными участниками рыночных отношений являются юридические лица, создание или прекращение которых представляет собой непрерывный естественный процесс, описанный в теоретической литературе как «жизненный цикл юридического лица». В отличие от физических лиц, рождение и смерть которых естественное явление, создание и прекращение юридического лица осуществляется в четко прописанных законом процедурах, изучение которых имеет важное практическое-теоретическое значение.

Современные тенденции развития законодательства и исследования в юридической литературе показывают, что особое внимание удиляетса вопросам банкротства. А институту ликвидации по сравнению с институтом банкротства и определении места ликвидации в отечественной гражданско-правовой науке не уделялось достаточно внимания. Закрепленное законодателем понятие ликвидации юридического лица не раскрывает правовую природу института ликвидации, не содержит указаний на характерные черты института ликвидации.

Из теоретических проблем процедуры ликвидации, требующих своего решения, можно назвать отсутствие глубоких исследований относительно оснований добровольного и принудительного применения процедуры ликвидации. Отмеченные недостатки общего понятия ликвидации юридических лиц имеют прямое отношение к ликвидации хозяйственных обществ. Кроме того, подавляющее большинство коммерческих юридических лиц составляют хозяйственные общества. Количество ликвидаций юридических лиц и в частности хозяйственных обществ увеличилось в связи с современной экономической ситуацией. Существуют также некоторые проблемы практического характера, требующие

соответствующего анализа и решения. Прежде всего, необходимо внести изменения в законодательство, регулирующее ликвидацию юридических лиц, поскольку неточности, противоречия и проблемы, которые сейчас есть, затрудняют осуществление процедуры ликвидации. Необходим тщательный анализ норм действующего законодательства, которые регулируют применение процедуры ликвидации, а также анализ судебной и иной правоприменительной практики, с целью выявления существующих проблем и предложений оптимальных вариантов решения данных проблем. Указанные, а также иные, рассмотренные в работе вопросы, предопределили актуальность и практическую значимость заявленной темы исследования.

Научная новизма диссертации заключается в том, что работа является первым комплексным исследованием, в котором был изучен ряд теоретических и практических вопросов, касающихся института ликвидации хозяйственных обществ в целом, а также различных компаний, вовлеченных в определенные сферы деятельности. В рамках работы изучен институт прекращения хозяйственных обществ, его формы, обсуждены вопросы, связанные с соотношением и отличиям ликвидации и реорганизации, разработана концепция ликвидации, выделены добровольные и принудительные виды ликвидации, их основания. Была изучена правовая природа решения общего собрания о ликвидации, подробно рассмотрена процедура ликвидации, а также ликвидационная комиссия как орган, осуществляющий ликвидацию.

Диссертация имеет как теоретическую, так и практическую ценность, так как вследствие исследования были выдвинуты рад предложений по совершенствованию законодательства, которые могут быть использованы в законотворческой деятельности.

Основные положения диссертации отражены в опубликованных автором научных статьях, а также представленны на различных научных конференциях.

ASHKHEN MANVEL SOGHOMONYAN

ISSUES OF LEGAL REGULATION OF LIQUIDATION OF ECONOMIC COMPANIES IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The formation of market relations in the Republic of Armenia as wll as the development of world economic relations has had a great impact on the civil law regulation of public relations. The most active participants in the market relations are legal entities, the creation or termination of which is a continuous natural process described in theoretical literature as the "life cycle of a legal entity". Unlike individuals, whose birth and death is a natural phenomenon, the creation and termination of a legal entity is carried out in procedures clearly prescribed by law, the study of which is of great practical and theoretical importance.

Modern trends in the development of legislation and research in the legal literature show that particular attention is paid to the issues of bankruptcy. And the institution of liquidation in comparison with the institution of bankruptcy and determination of the place of liquidation in the domestic civil law science has not been given enough attention. The concept of liquidation of a legal entity fixed by the legislator does not disclose the legal nature of the institution of liquidation, does not contain indications of the characteristic features of the institution of liquidation.

Of the theoretical problems of the liquidation procedure that require their solution, one can name the lack of in-depth research on the grounds for the voluntary and compulsory application of the liquidation procedure. The noted shortcomings of the general concept of liquidation of legal entities are directly related to the liquidation of business entities. In addition, the overwhelming majority of commercial legal entities are business entities. The number of liquidations of legal entities and, in particular, business entities has increased due to the current economic situation.

There are also some practical problems that require appropriate analysis and solution. First of all, it is necessary to amend the legislation regulating the liquidation of legal entities, since the inaccuracies, contradictions and problems that exist now complicate the implementation of the liquidation procedure. A thorough analysis of the norms of the current legislation that regulate the application of the liquidation procedure is required, as well as an analysis of

judicial and other law enforcement practice in order to identify existing problems and proposals for optimal solutions to these problems. These, as well as other issues considered in the work, predetermined the relevance and practical significance of the stated research topic.

The scientific novelty of the dissertation lies in the fact that the work is the first comprehensive study in which a number of theoretical and practical issues related to the institution of liquidation of economic societies in general, as well as various companies involved in certain areas of activity were studied. Within the framework of the work, the institution of the termination of economic companies, its forms were studied, issues related to the ratio and differences of liquidation and reorganization were discussed, the concept of liquidation was developed, voluntary and compulsory types of liquidation, their grounds were identified. The legal nature of the decision of the general meeting on liquidation was studied, the liquidation procedure was examined in detail, as well as the liquidation commission as a body carrying out liquidation.

The dissertation has both theoretical and practical value, since as a result of the study, a number of proposals were put forward for improving legislation, which can be used in legislative activity.

The main provisions of the dissertation are reflected in scientific articles published by the author, as well as presented at various scientific conferences.